17656

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ՀԱՄԱԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄ

# ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

324
Ը-61

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ
ԲԱԳՈՒ — 1935

324
Ց-61

26 SEP 2006

Сдано в производство 4-XII 35 г.
Разрешено к печати 13-XII 35 г.
Печатных листов 2

Թարգմանեց Ն. ԶՈՒԼԱՔԻ
Տեխ. խմբ. Կ. ԹԱԹԼԱՆՅԱՆ

Главлит № 8884 Ст. 364 Б-6 Заказ № 4086 Тираж 1000

Тип. „III Интернационал" Баку ул. Саратовца-Ефимова, 29

# ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋ ԽՈՐՀՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## Համաադրբեջանյան Կենտգործկոմի նախագահության 1935 թվի նոյեմբերի 20-ի վորոշումը

*Խորհրդային դեմոկրատիայի հետագա զարգացման, խորհուրդների ավելի ունեցող կոնկրետ–մրցությունների կազմակերպությամբ աշխատավորների աճած պրոլետարական – քաղաքական ակտիվության ամրացման և խորհուրդների դերը, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի մարմինների՝ սոցիալիստական շինարարության մեջ ել ավելի բարձրացնելու նպատակով՝* Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունը վորոշում է.

I. *Առաջարկել Նախ. ՍԽՀ Կենտգործկոմին, Ի. Լ. Ղարաբաղի մարզգործկոմին, Բաքվի խորհրդին, Կիրովաբադի և Նուխու քաղխորհուրդներին, բոլոր շրջանային գործկոմներին և Միլի խմբի խորհրդատնտեսությունների բանվորական խորհրդին՝*

1. *Բամբակագործական շրջաններում* 1936 *թվի հունվարի մեկից, մինչև փետրվարի մեկը, իսկ մյուս շրջաններում* 1935 *թվի դեկտեմբերի հինգից մինչև* 1936 *թվի հունվարի հինգը կազմակերպել ու ընտրողների առաջ անցկացնել խորհուրդների և պատգամավորների մասսայական հաշվետվություններ* 1935 *թվին նրանց կողմից կատարված աշխատանքի մասին:*

2. *Խորհուրդների ու նրանց պատգամավորների հաշվետվություններն անց կացնել՝*

ա) խորհուրդների աշխատանքի հետագա ամրապնդման, անաշխատունակ պատգամավորների հետ կանչման և նրանց բավարարելու հարմարագույն անձանցով փոխարինման, խորհուրդները դասակարգայնորեն խորթ ու խցկված տարրերից զտելու.

բ) խորհրդային դեմոկրատիայի հետագա զարգացման և սեկցիաների ու պատգամավորական խմբակների միջոցով ընտրողներին լայն կերպով խորհուրդների աշխատանքի մեջ ընդգրկելու,

գ) 1935 թվի բոլոր պլանների հաջող կատարման ու գերակատարման,

դ) կոնկուրս – մրցության պրոցեսում ձեռք բերած նվաճումների ամրացման,

ե) հեղափոխական զգոնության հետագա բարձրացման և ջախջախված կուլակության մնացորդների դեմ անողոք պայքար մղելու,

զ) աշխատանքի ստախանովյան մեթոդներն ամեն կերպ արտադրության մեջ ամրացնելու և ստախանովյան շարժման ամեն կերպ օգնելու և ծավալելու,

է) միջոցների մոբիլիզացիայի և ֆինանսական կարգապահության բոլոր կանոնների անշեղ պահպանման, նրանց խախտողների դեմ պայքար մղելու նշանակալի տալ:

3. Ապահովել շրջգործկոմների ու քաղխորհուրդների հաշվետու զեկուցում դնելը յերեք առանձին արդյունաբերական ձեռնարկությունների, խորհտնտեսությունների, ՄՏԿ ընդհանուր բանվորների ժողովներում և խոշոր կոլտնտեսությունների կոլտնտեսականների ժողովներում:

4. Ընտրողների նակազների կատարման նկատմամբ խորհուրդների և առանձին պատգամավորների աշխատանքի նախնական հետազոտման համար ապահովել ինքնաստուգման բրիգադների կազմակերպումը՝ կազմված խորհրդի յերեք անդամից, ակտիվիստներից, կոլտնտեսականներից, կոմյերիտականներից և



ՀՍՍՌ-Арм ССР
56/20-66

գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովի անդամներից:

5. Շրջանում խորհուրդների ու պատգամավորների հաշվետվությունները ապահովել ավելի լավ ղեկավարությամբ, որի համար մոբիլիզացիայի յենթարկել և գյուղական խորհուրդներին օգնելու համար 10 օրով ուղարկել շրջանի պատասխանատու աշխատողներին:

Հաշվետվությունների շրջանում շրջգործկոմի նախագահությունում յերկու անգամ լսել շրջանի խորհուրդների և պատգամավորների հաշվետվության ընթացքը:

6. Շրջգործկոմների ու խորհուրդների հաշվետու զեկուցումների մեջ ընտրողների առաջ պարզաբանել, թե խորհուրդներն ու գործկոմներն ինչպես են կատարել Համկոմկուսի (բ) 17-րդ համագումարի վորոշումները՝ կազմակերպչական ղեկավարությունը քաղաքական ղեկավարության մակարդակին հասցնելու, սեկցիաների, պատգամավոր. խմբակների ցանցի ընդարձակման և նրանց միջոցով խորհուրդների ամբողջ աշխատանքներում ընտրողներին, մանավանդ բանվորուհիներին ու կոլտնտեսուհիներին ընդգրկելու մասին, խորհուրդներն ինչպես են կատարում ընտրողների նակազները, պահպանում խորհրդային դեմոկրատիայի հիմնական սկզբունքները և ինչպես են կազմակերպել իրենց մոտ աշխատողների գանգատների ընդունումն ու քննարկումը:

7. Հաշվետու ժողովներում ապահովել բոլշևիկյան ինքնաքննադատության ծավալումը:

8. Հաշվետվությունների պրոցեսում հայտնաբերել և քրեական պատասխանատվության յենթարկել խորհուրդների այն աշխատողներին, վորոնք մեղավոր են ընտրողների նակազը՝ կարևորագույն քաղաքական փաստաթուղթը կորցնելում:

9. Շրջանի խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունների հանրագումարը լսել շրջգործկոմի նախագահությունում և ներկայացնել Ադրկենտգործկոմ:

10. Կազմակերպել և հետագայում ամեն քառամսյակում անցկացնել խորհուրդների ու պատգամավորների հաշվետվությունները ընտրողների առաջ:

II. Առաջարկել Ադրկենտգործկոմի կազմբաժնին (ընկեր Կ. Վ. Կասիմովին).

ա) Հրահանգ մշակել խորհուրդների ու պատգամավորների հաշվետվությունները կազմակերպելու, լավ անցկացնելու կարգի մասին և հասցնել տեղերին.

բ) Մասսայական տիրաժով հրատարակել և ուղարկել տեղերին խորհուրդների հաշվետվություններին նվիրված թռուցիկներ, բրոշյուրներ և տրաֆարետներ այս թեմայի.

գ) Խորհուրդների հաշվետվության ամբողջ ժամանակամիջոցում շրջաններին օգնելու համար աշխատանքին մասնակից անել Ադրկենտգործկոմի անդամներին:

III. Առաջարկել հանրապետական ու շրջանային թերթերի խմբագիրներին՝ խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունների ընթացքը լայն կերպով լուսաբանել մամուլում:

IV. Ներկա որոշումը հրատարակել մամուլում:

Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ՝
Մ. ԷՖԵՆԴԻԵՎ,
Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ժամանակավոր քարտուղար՝ Կ. Վ. ԿԱՍԻՄՈՎ



# ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

1934–35 թվի ընտրական կամպանիան անցավ աշխատավորության բարձր քաղաքական և արտադրական ակտիվության նշանաբանի տակ: Խորհուրդները այդ կամպանիայից դուրս եկան բանվորականաչափ ամրապնդված, ընդլայնված կոլտնտեսային գյուղի բանվորության մասսայականացմով, աշխատանքային արտադրողականության և կուլտուրայի հաղթանակներով.

Անցավ մեկ տարին նոր հրավերի խորհուրդների աշխատանքի մոմենտից: Այդ տարին նշանավորվեց և սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում ձեռք բերված վերելքով և հաղթանակներով: Որից ոչ ավելի ուժեղ են դարձել արդյունաբերության ինդուստրիալիզացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման արդյունքները: Խորհրդային առևտրի ծավալման հիման վրա վերացվել են հացի ու մյուս մթերքների քարտերը, իջեցվել են գները, ուժեղացել է ապրանքաշրջանառության ծավալները: Երևան է բերված և հզոր կերպով համապետական շինարարության մեջ է ներգրավված կոլտնտեսային և արդյունաբերական ակտիվը (կոլտնտեսականների 2-րդ համագումարը, արդյունաբերության և տրանսպորտի առաջավորների խորհրդակցությունը): Պայծառ կերպով փոխվում են սոցիալիստական Միության կերպարանքները: Ամրանում է երկրի պաշտպանունակությունը: Անընդհատ բարելավվում է աշխատավորության նյութական և կուլտուր–կենցաղային դրությունը: «Ապրելը դարձավ լավ, ապրելը դարձավ ուրախ»:

Այդ հաղթանակները ձեռք են բերված կոմունիս–

տական կուսակցության իմաստուն ղեկավարությամբ, ՍՍՀՄ ժողովուրդների առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԻ ղեկավարությամբ, Համկոմկուսի (բ) Անդրերկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավարությամբ հաջող կերպով իրագործում են կոլտնտեսային ունևոր կյանքի ստալինյան կանոնադրությունը — գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը, կուլտուրան ամրացնում են աշխատանքի և կենցաղի մեջ, պայքարում են խորհրդների համամիութենական ճյուղային կոնկուրս — մրցությունում առաջնություն ձեռք բերելու համար:

Մեր ընտրական օրգանների — խորհուրդների և գործկոմների աշխատանքի հիմնական սկզբունքը հանդիսանում է սերտ կապը ընտրողների հետ: Այդ կապի մեջ, աշխատավոր ընտրողների անմիջական ակտիվ օժանդակության մեջ — խորհուրդները յուրանում ու ուժ են քաղում իրենց խնդիրների հաջող կատարելու համար: Խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունները հանդիսանում են խորհուրդների՝ ընտրողների հետ կապի առաջնային առավելանը և ամենալայն ձևը:

Խորհրդային սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման պայմաններում, երբ օրակարգում դրվում է կապերի բարձրաստիճանության վերացման հարցը, ընտրողների առաջ խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունները կարևորագույն մասսայական քաղաքական աշխատանքի ինավորություն է ստանում: Խորհրդի հաշվետվության ընթացքում շարժման մեջ պետք է դրվեն հարյուր հազարավոր բանվորներ, բանվորուհիներ, կոլտնտեսականներ, կոլտնտեսուհիներ, աշխատավոր մենատնտեսներ, ծառայողներ, գիտության և արվեստի մարդիկ:

Ադրկենտգործկոմի նախագահության որոշման համաձայն դեկտեմբեր յեվ հունվար ամիսներին պետք է անցկացվեն խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունները ընտրողների առաջ: Խորհուրդ-



ների և պատգամավորների հաշվետվությունների անցկացնելու ընթացքում խորհրդային ամբողջ հասարակայնության ուշադրությունը պետք է կենտրոնացված լինի հետևյալ հարցերի վրա:

ա) խորհուրդների աշխատանքի հետագա ամրապնդումը, աշխատավորության ուշադրության մոբիլիզացիան նրանց աշխատանքի շուրջը, նոր ակտիվիստների ներգրավում սեկցիաների և պատգամավորական խմբակների աշխատանքի մեջ.

բ) ամեն կերպ ուժեղացնել հեղափոխական զգոնությունը և անխնա պայքարը ջախջախված թշնամու մնացորդների դեմ, մաքրել խորհուրդները դասակարգայնորեն — խորթ և նրա խցկված տարրերից, հետ կանչել աշխատանքի անընդունակ պատգամավորներին և նրանց փոխարինել լավագույն հարվածայիններով.

գ) 1935 թ. բոլոր պլանների հաջող կատարումը և գերակատարումը.

դ) խորհուրդների կոնկուրս — մրցության ընթացքում ձեռք բերած նվաճումների ամրապնդումը:

ե) ամբողջ աշխատավորության ներգրավում խորհուրդների աշխատանքի քննարկմանը և նրանց հետագա գործունեության միջոցառումների մշակումը:

զ) խորհուրդների համագումարների որոշումների և ընտրողների նակազների կատարման ստուգումը:

է) աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության խորացում և ընդլայնացումը.

ը) քաղաքի և գյուղի պրոլետարիատի մոբիլիզացիան՝ ԱՍԽՀ աշխատավորության կալվածատերերի և կապիտալիստների լծից ազատագրվելու 15-ամյակին արժանավոր կերպով դիմավորելու համար:

թ) ամեն կերպ արմատավորել արտադրության մեջ աշխատանքի ստախանովյան մեթոդը և այդ շարժմանը ամեն տեսակի օգնություն և աջակցություն ցույց տալը:

Նրա համար, որպեսզի հաջող կերպով անցկացվի խորհուրդների և պատգամավորների հաշվետվություն

ները ընտրողների առաջ, անհրաժեշտ է հենց հիմնիվանից մասսայական նախապատրաստական աշխատանք ծավալել: Այդ նախապատրաստությունը իր մեջ ընդգրկում է լայն բացատրական աշխատանք և պետք է տարվի սոցիալիստական շինարարության հերթական խնդիրների շուրջը հաշվետու ժողովների կազմակերպված անցկացնելու և մասսաների ուշադրության ակտիվացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ուղղությամբ:

Մասսայական–բացատրական աշխատանքը խորհուրդների հաշվետվությունների նախապատրաստական շրջանում կատարվում է երկու հիմնական մոմենտներից. ա) կամպանիայի արտացոլումը մամուլի մեջ. բ) մասսայական ագիտացիայի ձևերի օգտագործումը.

Մամուլի մեջ կամպանիայի արտացոլելու գծով – առաջարկված է լույս ընծայել դիմում ընտրողներին՝ բացատրելով կամպանիայի նշանակությունը, հրապարակել հոդվածներ, հրապարակել տարեգիր՝ խորհրդի հաշվետու ժամանակամիջոցի աշխատանքի հաշվետվությունը՝ հրապարակել աշխատանքի անընդունակ պատգամավորների ցուցակները, օգտագործել պատի թերթիկները ձեռնարկություններում խորհուրդների աշխատանքի, առանձին պատգամավորների աշխատանքների և ընտրողների նակազների կատարելու հաշվեհարդարի լուսաբանելու համար:

Ագիտացիայի մասսայական ձևերի օգտագործման գծով — բացի պլակատների և լոզունգների կախելուց, առաջարկվում է կազմակերպել սամավարնիկներ, հարց ու պատասխանի երեկոներ, խորհուրդների աշխատանքի վերաբերյալ առաջարկություններ ծավալել, գեղարվեստական երեկույթներ, հեծանիվավազքեր, լուսառեկլամներ, ջահերով երթ և այլն:

Խորհուրդների հաշվետվությունների նախապատրաստությունը կարող է ծավալել զանազան ձևերով և



ուղղություններով: Պրոֆմիությունները պետք է օգտագործեն իրենց բոլոր միջոցները նրա համար, որպեսզի շարժեն միությունների անդամների լայն մասսան, նրանց մեջ արթնացնեն հետաքրքրություն դեպի սեկցիաների, խմբակների աշխատանքը: Պրոֆմիությունների մասնակցությունը ոչ մի դեպքում չպետք է սահմանափակվի ընտրողներին հրավիրատոմսեր ուղարկելով կամ շենք տրամադրելով: Պետք է օգտագործել պրոֆմիությունների բոլոր ժողովներն ու նիստերը, ճաշի դադարները տեղերում՝ բացատրելու խորհուրդների հաշվետվությունների նշանակությունը, անցկացնել զրույցներ, բացատրել Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների նշանակությունը:

Կոմերիտմիության «Թեթև հեծելազորի» մասնակցությամբ պետք է կազմակերպել խորհուրդների առանձին տեղամասերի աշխատանքի, հենց պատգամավորների աշխատանքի ստուգում, [illegible] զեկուցումներով հաշվետու ժողովներում, կոնկրետաբար և գեղարվեստորեն ապացուցել ընտրողներին:

Խորհուրդների հաշվետվությունները պետք է օգտագործվեն մեծագույն չափով ծավալելու սոց-մրցությունը, հարվածայնությունը և նրա բարձրագույն արտահայտություն – ստախանովյան շարժումը:

Հաշվետվության ժողովների նախապատրաստելու գծով մեծ և պատասխանատու խնդիր է դրվում ակումբների, կուլտուրայի պալատների, կարմիր-ընթերցարանների, անկյունների և պատի թերթերի վրա: Հաշվետվությունների ընթացքում պետք է կազմակերպել բանվորների ու ծառայողների, կոլտնտեսականների ու մենատնտեսների առաջարկությունների հավաքումը, դրա համար օգտագործելով առանձին միությունների, կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների փորձը:

Մամուլը — կենտրոնական և շրջանայինը – աշխատանքի լավագույն օրինակների բոլշևիկյան քննադա-

ությամբ կարող է և պետք է ակտիվացնի խորհուրդների հաշվետու կամպանիան:

Պրոֆմիությունների ու հասարակական մյուս կազմակերպությունների կողմից ձեռք առած կազմակերպչական միջոցառումների ամբողջ գումարը պետք է ուղղված լինի ընտրողների առանձին խմբակների ակտիվացման ու կազմակերպման ուղղությամբ, ապահովելով աշխատավորների ընդհանուր ներգրավումը խորհուրդների աշխատանքի հիմնական տնտեսական ու կուլտուրական հիմնարկությունների քննարկում, ուժեղացնելով մեծ քանակությամբ առաջարկությունների հավաքը, վորը պետք է նպաստի քաղաքի — գյուղի տնտեսական — կուլտուրական կյանքի հետագա աճին և ամերի սուր կերպով վերացնի թերությունները գործնական աշխատանքում:

Նախաընտրական շրջանում անհրաժեշտ է անցկացնել խորհուրդների աշխատանքի լայն ինքնաստուգում՝ սոց. մրցության զանազան բնագավառներում: Դրա համար առաջարկվում է կազմակերպել 5–6 ինքնաստուգիչ բրիգադներ:

Խորհուրդների հաշվետվությանը պետք է նախորդեն խորհուրդների պատգամավորների լայն հաշվետվությունները՝ իրենց ընտրողների առաջ — խորհրդում և նրա մասսայական կազմակերպություններում անմիջականորեն կատարած աշխատանքների մասին: Ընտրողների ամեն մի խմբակ, ձեռնարկության ամեն մի ցեխ, կոլտնտեսության ամեն մի բրիգադ, վորը պատգամավոր է ուղարկել խորհուրդ, պետք է լսի իր ընտրյալների — պատգամավորների հաշվետվությունը: Դրա համար նրանք ունեն որինական իրավունք: Ընտրյալների պատասխանատվության զգացմունքը, ամրապնդում է պատգամավորների կապը աշխատավորության հետ: (Այն պատգամավորներին օգնելու համար, վորոնք զեկուցում են իրենց աշխատանքի մասին, մեր-



ջում մենք տալիս ենք զեկուցման որինակելի սխեման):

Մեր խորհուրդների կազմի մեջ ընտրված են ամուր, կուլակության և սոցշինարարության կազմալուծողների դեմ տարվող դասակարգային պայքարում ստուգված հեղինակավոր պատգամավորներ: Բայց նրանց մեջ, իհարկե, առանձին անհատական դեպքերում պատահում են մարդիկ, վորոնք կորցրել են կապը ընտրողների հետ, ընկել են լիկվիդացիայի յենթարկված դասակարգերի մնացորդների ազդեցության տակ: Նրանց պատգամավորներին պետք է անմիջապես հետ կանչել մեր խորհուրդների կազմից: Այդ իրավունքը տրված է միայն ընտրողներին: Դրանում կայանում է մեր խորհրդային դեմոկրատիայի կարևոր նվաճումներից մեկը: Այդպիսով, պատգամավորների հաշվետվությունները իրենց ընտրողների առաջ, բացի նրանց միջի կապի ամրապնդելուց, պետք է լայն կերպով օգտագործել խորհուրդների կազմի ամրապնդման համար, հետ կանչել ընտրողների համար չարդարացրած պատգամավորներին և նրանց տեղը հեղինակավոր ու կոփված ընկերներով փոխարինել: Պատգամավորների հետ կանչելու դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել ընտրական հրահանգի 46, 53, 55, 77, և 78 հոդվածներով:

Հաշվետու ժողովները պետք է վեր ածվեն խորհրդային պետության բոլոր օրգանների աշխատանքների լայն ստուգատեսի: Ընտրողների ուշադրությունը պետք է ակտիվացվի խորհուրդների խնդիրների, սոցշինարարության հարցերի վրա: Զեկուցողները պետք է տան իրենց կատարած աշխատանքի պարզ ու ճշգրիտ բնութագծում: Բանվորներն ու կոլտնտեսականները — ընտրողները պրոլետարական ձևով, առանց ծռումների ու թեքումները պետք է սուր կերպով դնեն թերությունների հարցերը: Խորհրդային ակտիվը պետք է յելույթ ունենա միաձույլ, վճռական հակահարված տալու առանձին դեմագոգիական ելույթներին:

Պակաս կարևոր նշանակություն չունի լավ նախապատրաստված զեկուցողների ընտրությունը: Ընտրողների գիտակցության և քաղաքական հայացքների աճման հետ կապված զեկուցողներին ներկայացվում են բարձրացրած պահանջներ: Վորպեսզի լավ զեկուցում կատարել, պետք է լավ իմանալ այն առարկան, վորի մասին խոսում են, և մեծ հմտությամբ մոտենալ մասսային, վորի առաջ դու յելույթ ես ունենում: Զեկուցողները, պայքարի ու կենդանի փաստերի վրա համեմատական տվյալների ընտրությամբ, ընտրողներին պետք է ցույց տան այն փոփոխությունները, վորոնք կատարվել են վերջին տարվա ընթացքում շրջանում յեվ այն ձեռնարկությունում կամ կոլտնտեսությունում, վորտեղ նա յելույթ է ունենում:

Զեկուցողի խնդիրն է վոչ թե ուղղակի ցույց տալ մեր նվաճումները, այլ գրավիչ կերպով պատմել, թե ինչպես է տարվել պայքարը մեր հաղթանակների ձեռք բերելու համար: Զեկուցողը պետք է իմանա վոչ միայն ընդհանուր թվերը, այլ և այն շրջանի տնտեսությունը, վորտեղ նա յելույթ է ունենում: Զեկուցումը պետք է գրավի մասսային, բարձրացնի նրա քաղաքական գիտակցությունը:

Մեր մեծ հայրենիքի հսկայական հաջողությունները, ամեն մի ձեռնարկության, հանքի և կոլտնտեսության նվաճումները, վորը ձեռք են բերել աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ տարած խիստ համառ պայքարում՝ դասակարգային թշնամու դեմ, անասանական ատելություն են առաջացնում չոչնչացրած թշնամու վերջին մնացորդների մեջ: Ահա թե ինչու խորհուրդների առաջիկա հաշվետվությունները կոգտագործվեն նրանց կողմից ագիտացիայի նպատակով, այդ նվաճումների նշանակության նսեմացնելու նպատակով: Այդ պատճառով խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունները պետք է տարվեն բանվորների, կոլտնտեսականների, աշխատավորների դասակարգային զգոնության և կազմակերպվածության մեծագույն բարձրացման և առանձին դեմոգոգիական յելույթների դեմ վճռական հակահարվածի պայմաններում:

Խորհուրդներն ու գործկոմները պետք է օրացուցային պլան կազմեն հաշվետվությունների կազմակերպված անցկացնելու համար և խստիվ հետևեն պլանի առանձին միջոցառումները սահմանված ժամանակին կատարելուն: Պետք է ձեռք բերել՝ ձեռնարկություններում և կոլտնտեսություններում պատգամավորների հաշվետվությունների անցկացնելու կոնկրետ պլանների կազմելը: Միջոցառումները, վորոնք ապահովում են խորհուրդների հաշվետվությունների անցկացնելը, իրենց մեջ ընդգրկում են ընտրողների և ձայնատուակների ցուցակների ստուգումն ու ճշտելը, ընտրել զեկուցողներ, վոտքի կանգնեցնել առանց բացառության բոլոր խորհրդային, պրոֆմիութենական, կոոպերատիվային և մյուս կազմակերպությունները: Հաշվետվության կետերի ցանցի իսկույն վորոշելը անհրաժեշտ է այնպես անել, վորպեսզի հաշվետվության ժողովները մոտեցնել բանվորներին, կոլտնտեսականների մասսային և ընտրողների ամեն մի խմբակին: Հաշվետու ժողովները պետք է ապահովվեն հարմար լայնարձակ շենքերով, նստարաններով, լոզունգներով, պլակատներով և գեղարվեստական յելույթներով: Հրապարակներում, պատերի ու ցանկապատների, ակումբների ու կինոների առաջ կախել խոշոր պլակատներ՝ լոզունգներով:

Պլանով նախատեսնված միջոցառումների իրագործման հետևելը դրվում է խորհուրդների և գործկոմների անդամների վրա, վորոնք առանձնապես ամրացվում են առանձին տեղամասերի՝ տեղական կազմակերպությունների ղեկավարելու համար: Տասնօրյակում մեկ անգամ, խորհուրդների և գործկոմների նախագահություններում, անհրաժեշտ է լսել ամրացվածների զե–

կուցումները և քննարկել հաշվետվությունների ընթացքը։

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ընտրողների բոլոր առաջարկությունների հաշվառմանը և նրանց կատարման կոնկրետ միջոցառումների մշակմանը։ Սեկցիաներին և պատգամավորներին միջոցով անհրաժեշտ է հաղորդել ընտրողներին առաջարկությունների կատարման ժամկետների մասին, մասնավորապես, թե ինչ առաջարկություններ չեն կարող իրագործվել և նրանց չիրագործելու պատճառները։ Դրա համար առաջարկված է օգտագործել պատի թերթը, ժողովը և այլն։

Խորհուրդների հաշվետվության ընթացքում առհասարակ հնարավորություն է բացվում բանվորների և բոլոր աշխատավոր մասսաների ակտիվության նոր վերելքի համար։ Այդ ակտիվությունը պետք է ուղղվի դեպի սոցշինարարության ուժեղացումը, կուլտուրան և աշխատանքը կենցաղի մեջ հետագա արմատավորելու, ընտրողների նակազների իրագործումը ստուգելու, խորհուրդների ղեկավար դերի հետագա ուժեղացնելու վրա։

Ընտրողների ակտիվ մասնակցությունը խորհուրդների հաշվետվությունների քննարկմանը պետք է ուղեկցվի ստեղծագործական նախաձեռնության նոր ալիքով, խորհուրդների մեջ հարվածայինների ու առաջավոր նոյլինների նոր հոսանքի կազմակերպելով, ձեռնարկներում և կոոպերատիվներում նոր հարվածային բրիգադների ստեղծելով։



# ՀՐԱՀԱՆԳ

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

56/20-66

Ընտրողների առաջ խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունների հաջող կազմակերպելու և անցկացնելու համար — անհրաժեշտ է.

1. Կազմել և շրջգործկոմի կամ քաղխորհրդի նախագահության հաստատության մտցնել ընտրողների առաջ խորհուրդների և պատգամավորների հաշվետվության անցկացնելու օրացուցային պլանը, մասնանշելով, յերբ, վորտեղ և ով ինչ աշխատանք է տանելու։ Այդ պլաններում նախատեսնել շրջգործկոմների, քաղխորհրդի, կոմյերիտմիության, արհեստակցական և հասարակական մյուս կազմակերպությունների մասնակցությունը խորհուրդների հաշվետվությունների մեջ։

2. Խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունների կազմակերպելու և անցկացնելու համար տեղերում ամրացնել բոլոր գյուղական խորհուրդներին շրջանի պատասխանատու աշխատակիցներին 10 օրվա ժամկետով։

3. Անցկացնել հատուկ հրահանգչական խորհրդակցություն գյուղխորհուրդներին ամրացված պատասխանատու աշխատակիցների հետ՝ խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունների կազմակերպելու և անցկացնելու կարգի մասին։

ՊԵՏ ԿԵՆ ԳՐ ԴԱՐԱՆ
Гос библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

4. Հրավիրել շրջգործկոմի–քաղխորհրդի հատուկ պլենում մասնակցությամբ գյուղխորհուրդների բոլոր նախագահների և պատ. ամրացվածներին: Այդ պլենումում քննարկել Ադրկենտգործկոմի նախագահության վորոշումը սույն տարվա 20 նոյեմբերից, յեվ սույն հրահանգչական նամակը: Հենց այդ պլենումում հաստատել և գյուղխորհուրդների նախագահներին հանձնել ըստ շրջանի անցկացնելու պլանը:

5. Նշել և անցկացնել մի քանի արդյունաբերական ձեռնարկների, ՄՏԿ և խորհտնտեսությունների բանվորների ընդհանուր ժողովներում և խոշոր կոլտնտեսությունների կոլտնտեսականների ժողովներում–շրջգործկոմի հաշվետու զեկուցումները, արտացոլելով նրանցում, շրջգործկոմի միջոցառումների համահավասար՝ տնտեսական – քաղաքական պլանների կատարման կամպանիան, և Ադրկենտգործկոմի վորոշման մեջ մատնանշված աշխատանքի ծրագիրը:

6. Շրջգործկոմի կամ քաղխորհրդի հաշվետու զեկուցումը անպայման հրատարակել տեղական մամուլում:

7. Շրջգործկոմի կամ քաղխորհրդի հաշվետվության զեկուցումների զեկուցողների ցուցակը պետք է հաստատվի նրանց նախագահություններում: Զեկուցողները կարող են լինել միայն գործկոմի կամ քաղխորհրդի անդամները:

8. Խորհրդի և պատգամավորների հաշվետվության վերաբերյալ ամբողջ աշխատանքը բաժանվում է յերեք շրջանի:

1. նախապատրաստական

2. պատգամավորների և պատխմբակների հաշվետվությունները և

3. խորհրդի հաշվետվությունը:



## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

### Ըստ գյուղխորհուրդների

1. Պատասխանատու կցվածը, գյուղխորհրդի նախագահի հետ գյուղխորհրդի հաշվետվությունների անցկացնելու ամբողջական օրացուցային պլան է կազմում.

2. Հրավիրվում է գյուղխորհրդի ընդլայնված պլենումը հետևյալ օրակարգով.

ա) «Խորհուրդների և պատգամավորների կողմից ընտրողների առաջ հաշվետվություններ անցկացնելու մասին» Ադրկենտգործկոմի նախագահության սույն տարվա նոյեմբերի 20-ի վորոշումի մշակումը.

բ) խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունների անցկացնելու պլանի հաստատումը.

գ) ինքնաստուգման բրիգադների ջոկելը:

3. Ինքնաստուգման բրիգադները ջոկվում են մոտավորապես 5–6, ամեն մեկ բրիգադ բաղկացած 3 հոգուց բաղկացած կազմով:

1) Բրիգադ՝ ստուգելու խորհրդի աշխատանքը կոլտնտեսային շինարարության և գյուղական տնտեսության բնագավառում.

2) Բրիգադ՝ ստուգելու աշխատանքը ճանապարհային շինարարության բնագավառում.

3) Բրիգադ՝ ստուգելու խորհրդի աշխատանքը սոցիալիստական անասնապահության զարգացման բնագավառում.

4) Բրիգադ՝ ստուգելու խորհրդի աշխատանքը կուլտուրական շինարարության բնագավառում.

5) Բրիգադ՝ ստուգելու խորհրդի աշխատանքը հեղափոխական օրինականության և աշխատավորների բողոքները քննելու բնագավառում.

6) Բրիգադ՝ ստուգելու խորհրդի աշխատանքը՝ մատակարարման և մթերման պլանների կատարման և խորհրդային առևտրի բնագավառում։

Ծանոթություն. Խորհրդի ֆինանսային աշխատանքը ստուգում է գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովը։

4. Ինքնաստուգման բրիգադների ղեկավարները պետք է առաջ քաշվեն բացառապես խորհրդի անդամների թվից։ Բրիգադի անդամներ կարող են ընտրվել կոլտնտեսականները, գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովների անդամները, կոմյերիտականները և ուրիշները։ Բրիգադները աշխատում են պատասխանատու կցվածների ղեկավարության տակ։

5. Ինքնաստուգման բրիգադներն իրենց աշխատանքի անկյունի գլխին դնում են գյուղխորհրդի կողմից ընտրողների նակազների կատարման ստուգումը և ստուգում են գյուղխորհրդի համապատասխան սեկցիայի և պատգամավորական խմբակի աշխատանքները։

6. Այդ ժամանակամիջոցում գյուղխորհրդի նախագահը պատասխանատու կցվածի մասնակցությամբ յեվ օգնությամբ կազմում է գյուղխորհրդի հաշվետու զեկուցումը։ Գյուղխորհրդի հաշվետվությունը նախքան ընտրողների քննարկմանը պետք է հաստատվի գյուղխորհրդի պլենումի նիստում։

7. Գյուղխորհրդի հաշվետվությունը անպայման իր մեջ պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

ա) 17-րդ կուսհամագումարի վորոշումների իրագործման տեսանկյունով խորհրդի աշխատանքների վերակառուցման մասին.

բ) խորհրդի մասսայական կազմակերպությունների (սեկցիաներ, պատգամավորներ) աշխատանքի ամրացնելու և նրանց միջոցով խորհուրդների գործնական աշխատանքում աշխատավորների ներգրավման մասին.



գ) խորհուրդների կոնկուրս-մրցության մասին.

դ) խորհուրդների կոնկուրս — մրցության մասին. րագործման մասին.

ե) կոլտնտեսային շինարարության մասին.

զ) գյուղատնտեսության դրության մասին մասնավորապես, բերքատվության բարձրացման, կորուստների դեմ պայքարելու և այլն.

է) անասնապահության բարձրացման և զարգացման և կոոպերացիայի և մթերողական օրգաններում խորհրդի աշխատանքի մասին։

ը) միջոցների մոբիլիզացիայի մասին.

թ) հասարակական սոցիալիստական սեփականության պահպանման և սոցիալիստական օրինականության ամրապնդման մասին.

ժ) բարեկարգության և ճանապարհաշինարարական շինարարության մասին.

ի) կուլտուրական շինարարության (դպրոցներ, առողջապահության և այլն) մասին.

լ) տեղական արդյունաբերության զարգացմանն ու ջանկցելու մասին.

խ) յերկրի պաշտպանության ամրապնդման մասին։

Այս բոլոր հարցերի շուրջը գյուղխորհուրդը հաշիվ տալով, պետք է տա կոնկրետ, ապացուցիչ տվյալներ՝ իր աշխատանքի մասին։

Գյուղխորհրդի հաշվետվությունը բոլոր մասերում իր մեջ պետք է արտացոլի խորհրդի մղած դասակարգային պայքարը և նրա կազմակերպչա — մասսայական աշխատանքը խորհրդի գործունեության բոլոր բնագավառներում։

Իր հաշվետվության մեջ գյուղական խորհուրդը չպետք է սահմանափակվի ձեռնարկների, կազմակերպությունների և հիմնարկությունների աշխատանքի

բնութագրելով նրա միայն նրանցից ստացած տեղեկությունների վերլուծելով, այլ պարտավոր է անպայման տեսնել, թե նա ինչպես է նրանց ղեկավարում, թե ինչպես խորհուրդը ինչ է արել կոլտնտեսությունների բոլշևիկյան ամրապնդման և կոլտնտեսականներին ունևոր դարձնելու, անասնապահության զարգացման, ճանապարհային և դպրոցական շինարարության վերաբերյալ, ինչ է արել գյուղի աշխատավորների կուլտուր-կենցաղային դրությունը բարելավելու, կոոպերացիայի աշխատանքները բարելավելու, երկրի ու պաշտպանունակությունը ամրապնդելու վերաբերյալ և այլն:

## Պատգամավորների, սեկցիաների և պատխմբակների հաշվետվությունների շրջան

1. Այդ ժամանակաշրջանում, խորհրդի պլանով՝ խորհրդի նախագահի կամ նախագահության անդամների մասնակցությամբ հրավիրվում է ընտրողների ընդհանուր ժողով, վորտեղ դրվում են խորհրդի այն անդամների զեկուցումները, վորոնք ընտրված են տվյալ տեղամասից: Ընտրողների հենց նույն ժողովներում տրվում են առանձին սեկցիաների և պատխմբակների հաշվետու զեկուցումները իրենց տարած աշխատանքի մասին:

2. Հենց նույն ժողովներում անաշխատունակ պատգամավորները հետ են կանչվում և նրանց տեղը ընտրվում են խորհրդի նոր անդամները լավագույն հարվածայիններից:

## Խորհուրդների հաշվետվությունների շրջան

1. Խորհուրդը հատուկ պլենում է հրավիրում խորհրդի կատարած աշխատանքի մասին արած խորհրդի զեկուցումը քննարկելու համար: Հենց միևնույն նախ-



ընտրվում են զեկուցողներ ընտրական տեղամասերում հաշվետվությունների համար.

2. Գյուղխորհրդի հաշվետու զեկուցումը տրվում է (ըստ պլանով) ընտրողների ընդհանուր ժողովներում և ամեն մի ընտրական տեղամասում: Գյուղխորհրդի հաշվետու զեկուցումը կարող են զեկուցել խորհրդի նախագահը կամ խորհրդի նախագահության անդամը:

3. Հենց այդ հաշվետու ժողովներում կից զեկուցումներով պետք է ելույթ ունենան ինքնաստուգման բրիգադների բրիգադիրները և գյուղխորհրդի վերստուգիչ հանձնաժողովը:

Ծանոթություն.— Առանձին դեպքերում խորհրդի անդամների, սեկցիաների, պատխմբակների յեվ հենց իրեն գյուղխորհրդի հաշվետվությունները կարող են լսվել ընտրողների հենց միևնույն ժողովում:

4. Հաշվետու ժողովները պետք է տարվեն բոլշևիկյան ծավալուն ինքնաքննադատության նշանաբանի տակ: Խորհրդի և պատգամավորների հաշվետվության առթիվ վիճաբանություններում ելույթ ունեցող ընտրողների ժամանակը չսահմանափակել և թույլ տալ արտահայտվելու: Ժողովները պետք է պատրաստված լինեն գործնական հանդիսավորությամբ: Ժողովի տեղն ու ժամանակը պետք է ընտրվեն այնպիսի հաշվով, վորպեսզի ապահովվի ընտրողների մեծագույն չափով ներկա լինելը, առանձնապես կանանց: Ժողովի ժամանակի և տեղի մասին նախորոք հայտնել ընտրողներին; Խրճիթ — ընթերցարանները, կոլտնտեսային ակումբները, կոլտնտեսային, գյուղխորհրդի, և գյուղի մյուս հասարակական հիմնարկների շենքերը հաշվետվության օրերին զարդարել լոզունգներով, պլակատներով և առաջնորդների նկարներով: Խորհրդի և պատգամավորների հաշվետվության օրը, գյուղի ակտիվի ուժե

րով լույս ընծայել պատի թերթը, վորի մեջ լայնորեն լուսաբանել գյուղխորհրդի աշխատանքը:

5. Խորհրդի և պատգամավորների՝ ընտրողների առաջ՝ տված հաշվետվությունների ընթացքը առանձին գյուղական խորհուրդներում՝ լայն լուսաբանել շրջանային թերթի էջերում: Շրջանի հաշվետվության արդյունքները ամբողջովին լսել շրջգործկոմի կամ քաղխորհրդի նախագահությունում և ներկայացնել Ադրկենտգործկոմ:

6. Խորհուրդների և պատգամավորների հաշվետվությունների ընթացքի և արդյունքների հաշվառը կատարվում է միատեսակորեն, վորը պարտադիր է բոլոր շրջգործկոմների, քաղաքային և շենային խորհուրդների համար: Սրան կից ձևով համապատասխան կազմված հաշվառի հաշվետվությունը, նույնպես յեվ շրջգործկոմի ինֆորմացիոն զեկուցումը, քաղխորհուրդները և շենային խորհուրդները ներկայացնում են Ադրկենտգործկոմի կազմբաժնին, ամեն մի տասնօրյակում, այսինքն, ամսի 10-ին, 20-ին և 30-ին:



# ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ՊԵՏՔ Է ԽՈՍԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ, ՎՈՐԸ ԶԵԿՈՒՑՈՒՄ Է ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ ԻՐ ՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Իր զեկուցման ներածական մասում, պատգամավորը պետք է ամենապարզ ձևով բացատրի խորհրդի աշխատանքի հիմնական մոմենտները, բերելով մի քանի ցայտուն փաստեր ու թվեր: Բացի դրանից, անհրաժեշտ է վոր ամեն մի զեկուցող հաստատ հիշի ընտրողների այն խմբակի սոցիալական կազմն ու առանձնահատկությունները, վորոնց առաջ նա հաշվետվություն է կատարում և դրա համեմատ իր ուշադրությունը կենտրոնացնի այն հարցերի վրա, վորոնք ընտրողների տվյալ խմբակի համար հատուկ հետաքրքրություն են ներկայացնում:

Համառոտ բացատրելով խորհրդի աշխատանքի հիմնական մոմենտները, պատգամավորն անցնում է բուն երկության իր անձնական աշխատանքի զեկուցմանը՝ վորպես պատգամավորի. Իր զեկուցման այդ մասում պատգամավորը պետք է հետևի հետևյալ օրինակելի պլանին.

2. **Իր սեկցիայի աշխատանքի կարևորագույն մոմենտները:** Նրա մասնակցողների կազմը, կառուցվածքը: Գործնական աշխատանքի մեթոդները: Մշակված հարցերից կարևորագույնը: Սեկցիայի աշխատանքի գործնական արդյունքները: Հերթական խնդիրները:

3. **Պատգամավորի աշխատանքը սեկցիայում.**—պատգամավորի կողմից տվյալ սեկցիայի ընտրությունը: Սեկցիայի նիստերի հաճախումը: յեթե յեղել են չներկա

յանալու ունակները, ինչից են նրանք առաջացել: Սեկցիայի անդամի ակտիվությունը նկատառում: Ինչ հարցերի առթիվ է ելույթ ունեցել վիճաբանություններին, հարցեր է տվել: Ինչ թերությունների վրա յե ուշադրություն դարձրել: Ինչպիսի կոնկրետ առաջարկություններ է մտցրել: Յեթե նրանք բեկանված են, ապա ինչ պատճառով:

4. Սեկցիայի անդամի բեռնվածությունը: *Յեթե պատգամավորը անդամ է սեկցիայի կամ խմբակի բյուրոյի, ապա այնտեղ ինչպիսի աշխատանք է տանում: Հանձնարարությունների կատարման ստուգումը: Սեկցիայի սակավ պատասխանատվություն ունեցող անդամների հրահանգչության մեջ մասնակցելը:*

5. Հետազոտիչ աշխատանք. — *Ինչ հետազոտությունների մեջ է մասնակցել: Ինչպիսի կոնկրետ առաջարկություններ է կատարել այդ դեպքում: Ամենահետաքրքիր մոմենտները, վորը յերևան է բերել հետազոտության ժամանակ: Ինչպիսի գործնական առաջարկություններ է մտցրել: Հետազոտական խմբակը և սեկցիան ընդունել են արդյոք այդ առաջարկությունները:*

6. Ամրացվածներ. — *Սեկցիայի անդամն աշխատում է արդյոք վորպես ամրացված, ինչ ձեռնարկության — կոոպերատիվության կից: Ինչպիսի կոնկրետ ծառայություններ է կատարում: Ինչումն է արտահայտվել այդ աշխատանքի արդյունքները:*

7. Աշխատանքը հասարակական կազմակերպություններում. — *Մասնակցում է արդյոք սեկցիայի անդամը մասսայական խորհրդային աշխատանքի ստորին բջիջներից մեկում — փողոցային և թաղային կոմիտեներ, ժողատենակալ, տասնյակ-ջոջ, աջակցության կոմիսիա: Ինչումն է արտահայտվել նրա աշխատանքը:*

8. Ինչումն է արտահայտվել պատգամավորի կապը ընտրողների հետ. — *Քանի անգամ է հաշիվ տվել իր տարած աշխատանքի մասին՝ իր ընտրողների առաջ: Ինչպես է համախմբել պատգամավորական խմբակի շուրջ ակտիվին: Ինչպիսի առաջարկություններ է մտցրել: Ինչպիսի հանձնարարություններ է կատարել: Մասնակցություն՝ կամպանիաների անցկացնելում: Խորհրդային աշխատանքի ժողովրդականացումը և աշխատավորների խորհրդի աշխատանքի մեջ ներգրավումը:*

Ինչ է արել իր ընտրողների նակազների հավելվածների ավելի արագ առաջ շարժելու համար:

*Ինչ հարցերով են դիմել պատգամավորին (բողոքներ, դիմումներ, առաջարկություններ և այլն): Ինչ է արված այդ հարցերի բավարարելու համար:*

9. Աշխատանքը արտադրության մեջ.

10. Ուրիշ ինչպիսի գործնական ձևի աշխատանքների մեջ է մասնակցել պատգամավորը. — *Մասնակցել է արդյոք պատրաստել վորոշումների նախագծերի, աշխատանքների պլանների մշակելու վրա և այլն: Ինչպիսի արդյունքներ են տվել այդ աշխատանքները:*

11. Իր աշխատանքի արդյունքների ընդհանուր գնահատականը՝ ինքնաքննադատության կարգով. — *Ինչ պատճառներ են բացասական ազդել պատգամավորի խորհրդում գործնական մասնակցություն ունենալու վրա, ուրիշ պարտականություններով ծանրաբեռնված լինելը և այլն: Ինչից են առաջացել թերությունները՝ ընտրողներին սպասարկելու մեջ: Պատգամավորն ինչ է առաջարկում ձեռնարկել՝ հետագայում ընտրողների հետ ունեցած կապը լավացնելու և նրանց կարիքներն սպասարկելու համար:*

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՍԽԵՄԱՆ

## Կազմակերպչական — տեխնիկական նախապատրաստությունը

1. Ըստ շրջանի խորհուրդների հաշվետվությունների անցկացնելու պլանի և շրջանների ընտրատարածքների հրահանգները տեղերին (կցել տրամաձևը) յեթե թույլ են տրված շեղումներ Անդրկենտգործկոմի ցուցմունքներից հաշվետվությունների անցկացնելու կարգի և ժամկետների վերաբերյալ, պարզել պատճառները:

2. Վերստուգել տեղամասերի ընտրատարածքների կատարելու ստուգման կազմակերպումը ու ղեկավարությունը, կապը (աշխատակիցներին տեղերն ուղարկելը, հրավեր զեկուցանելու համար, տեխնիկական կապը, կապը ռադիոյով, փոստով և այլն):

3. Ինչպես է կազմակերպված ընտրողների հաշվառը, ինչպես է ստուգված այդ աշխատանքը:

4. Ինչպես են ապահոված տեղերը գրականությամբ (բրոշյուրներ, լոզունգներ, պլակատներ և այլն):

5. Տեղական կազմակերպությունների աշխատանքի ընդհանուր գնահատությունը՝ խորհուրդների հաշվետվության նախապատրաստելու առթիվ, կազմակերպչական դրական աշխատանքի փաստերը: Թույլ աշխատանքի փաստերը:

6. Հաշվետվությունների անցկացնելու հետ կապված աշխատանքից — քաղաքական աշխատանքը, մասնավորապես, խորհուրդների աշխատանքի վերակառուցման և աշխուժացման հարցերի հետ կապակցված: Բացատրական աշխատանքի կապակցումը ճյուղային կոնկուրսների անցկացնելու հետ:



7. Պատի և տպագիր թերթերի դերը: Աշխատավորների բացատրական աշխատանքի ձևերը, ագիտ — բրիգադներ, կինո, ռադիո, բեմադրում, կենդանի լրագիր: Գյուղացու տների, կարմիր — ընթերցարանների, ակումբների աշխատանքը և այլն:

## Հաշվետվության ժամանակաշրջանը

1. Հաշվետվության տեղամասերի քանակը և նրանց կազմակերպելու սկզբունքը. շենքերով, զեկուցողներով նրանց ապահովելը:

2. Հաշվետու զեկուցումների քանակը (գյուղական խորհուրդների, վերստուգիչ հանձնաժողովների, շրջգործկոմների, քաղխորհուրդների): Խորհուրդների սեկցիաների, պատգամավորների և խորհրդի առանձին անդամների հաշվետվությունները:

3. Ինչպիսի հարցեր են քննարկվել հաշվետու ժողովներում: Ընտրողների ելույթների բովանդակությունը և հաշվետվությունների առթիվ արած կարևոր նկատողությունները: Մասնավորապես, գյուղում. — կոլտնտեսությունների կազմակերպչա-տնտեսական ամրապնդման, անասնապահության զարգացման, բերքատվության բարձրացման և կորուստների դեմ տարվող պայքարի, մսի, հացի և այլնի մատակարարման կազմակերպումը, կոլտնտեսային առևտրի զարգացումը, ոգնություն դպրոցական շինարարությանը և այլն:

Քաղաքներում — արդֆինպլանի համար տարվող պայքարի հարցերը. աշխատավորների մատակարարումը ու սնունդը բարելավելու, բնակարանային և կոմունալ շինարարության զարգացումը, կոոպերացիայի աշխատանքը, յերկաթուղային շինարարության ոժանդակություն, ոգնություն գյուղին, կաթի և մրգաբանջարեղենի քաղաքամերձ բազայի ստեղծումը:

Ընդհանուր հարցեր.— միջոցների մեքենիզացիա և բյուջետային շինարարություն (փոխատվություններ, խնայողական գործ, տուրքեր, ինքնահարկում և այլն), հեղափոխական օրինականության ամրապնդումը, հասարակական սեփականության պահպանություն, յերկրի պաշտպանունակության ամրացում և այլն:

Բնութագրել 17-րդ կուսհամագումարի և խորհուրդների համագումարի վորոշումների կյանքի մեջ գործնականորեն անցկացնելու հարցերին նվիրված ելույթները:

4. Ինչպես են վերաբերվել ընտրողները խորհրդի կողմից կոլտնտեսային գյուղում կուլտուրա մտցնելու միջոցառումների վերաբերմամբ:

5. Ընտրողների նակազների կատարման ստուգմանը: Նակազների կատարման գծով խորհրդի տարած աշխատանքի գնահատականը: Շինարարության առանձին ճյուղերի վերաբերմամբ ընտրողների նոր առաջարկությունների ընդհանուր թիվը: Թվել այդ առաջարկներից բնորոշողները:

6. Հաշվետու ժողովներում ընտրողների մասնակցության աստիճանը և նրանց ակտիվությունն առանձին կատեգորիաներով (բանվորներ, ծառայողներ, կուստարներ, կոլտնտեսականներ, մենատնտեսներ, ինտելիգենցիա և այլն): Հարվածայինների, բանվորների և կոլտնտեսային ակտիվի առաջատար դերը:

7. Ինքնաստուգիչ բրիգադների աշխատանքը: Գյուղական ակտիվի մասնակցությունն ինքնաստուգմանը: Թերությունների յերևան հանելը: Ինքնաստուգման աշխատանքի թերությունները: Բրիգադների թիվը յեվ մասնակցողների քանակը: Վերստուգիչ հանձնաժողովների կողմից խորհրդի աշխատանքի ստուգում:

8. Թերությունները խորհրդի աշխատանքում, վորոնք յերևան են բերել ընտրողները հաշվետու ժողովներում և առաջարկություններում: Աշխատանքի վրա ճյուղե-



րում: Խորհուրդների աշխատանքին անդրադարձած դանդաղելու դեպքեր, ինչ պատասխանատվություններով. [illegible] ինչպիսի խմբակների կամ հասարակական կազմակերպությունների կողմից ինչպիսի բանաձևեր յեն առաջադրված:

9. Դասակարգային պայքարը հաշվետու ժողովներում: Դասակարգային թշնամու ակտիվությունը: Խորհրդային հասարակայնության դեմ նրա տարած պայքարի բնորոշ ելույթները, մեթոդները և ձևերը: Մասսաներին կազմակերպելու ձևերը դասակարգային թշնամու դեմ պայքարելու համար: Բանվորների և կոլտնտեսային ակտիվի առաջատար դերը: Աշխատանքը մենատնտեսների մեջ:

10. Բանվորների, կոլտնտեսականների և մնացած աշխատավորության արտադրական ակտիվությունը հաշվետու ժողովներում, սոցշինարարության զանազան ճյուղերում և նրա ձևերը (արտադրական մրցության պայմանագրեր, աշխատանքային թափի աճում, ավտոֆինպլանի ժամկետից առաջ կատարում, ձեղքվածքների վերացում, պայքար վորակի համար, բանվորական ռացիոնալիզատորական առաջարկությունների հավաքում, գյուտարարություն, արտադրական փոխօգնության և բուքսիրի կազմակերպում, կոլտնտեսություններ մտնելը և այլն):

11. Կանանց մասնակցությունը հաշվետու ժողովներում: Կանանց աշխատավոր մասսաների կազմակերպում: Հաշվետու ժողովներում նրանց ներկայանալը և ակտիվությունը, մասնավորապես, գյուղում — կոլտնտեսուհիների, մենատնտեսուհիների, քաղաքում — բանվորուհիների, տնտեսուհիների: Ժողովներում կանանց բնորոշ ելույթները (ցույց տալ սոցիալական կազմը): Նրանց վերաբերմունքը դեպի կուսակցություն, կառավարության և իշխանության տեղական որգանների առանձին միջոցառումները: Ազգային փոքրամասնությունների կանանց դերն ու մասնակցությունը:

3Հ-Ա
Սա2696
1489

12. Ադրբեջանկոմյերիտմիության և յերիտասարդության մասնակցությունը հաշվետու ժողովներում, մասնավորապես նախապատրաստական միջոցառումներում, ժողովներին ներկայանալը և և ակտիվությունը:

13. Ինտելիգենցիայի մասնակցությունը (ուսուցիչներ, ագրոնոմներ, բժիշկներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ և ուրիշ.)։ Նրանց յելույթները հաշվետու ժողովներում և մտցրած առաջարկությունները:

14. Պետական հիմնարկների, հասարակական յեվ կոոպերատիվային կազմակերպությունների մասնակցությունը հաշվետու ժողովներում:

15. Պատգամավորների խմբակների դերն արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության ձեռնարկներում՝ խորհուրդների հաշվետվությունները նախապատրաստելու և անցկացնելու գործում:

ՀՀ Ազգային գրադարան
NL0199789
ՀՍՍՌ-Арм ССР

**К отчетам Советов и депутатов перед избирателями**

Издание Организационного отдела АзЦИК

Баку — 1935